Միսաք Մեծարենց

Արևին

Հարավի մեղմ ու լիաշունչ հովին հետ,
որ վաղուց երազված համբույրի մը պես,
իմ սիրակարոտ հոգիս հեշտանքով կը լիացնե,
շողա՛, ո՞վ արև, շառափներովդ ոսկեծայր,
մառախլապատ Երկունքիս մեջ՝
ուր Մտածումը կը դեգերի ուղեմոլար,
շողա՛, շողա՛, բարի՛ արև, հիվա՛նդ եմ…:
Պատուհանիս հեղուկ ծոցին մեջ ինկած խելահեղ,
միջօրեի հեշտադալար ու բոցակապ երազին գիրկը,
թևատարած կըսպասե՛մ.
պլլե՛ զիս բոցեղեն ցանցերուդ մեջ,
ու օրորե՛ ջերմագին
ու կիզանուտ համբույրիդ տակ
թող հոգվույս մեջեն անցնին կարգավ
մանուկներն ընդարմացած:
Մինչև որ
կանգնիմ նորեն ու անցնի՛մ դարձյալ
տարփանքիս խանդաղատ ճամբաներեն:
Հիվա՛նդ եմ, բարի՛ արև, շողա՛, շողա՛…
հոգիս թռչնիկ մըն է,
օդ ու լույսի, երգ ու ծիծաղի կարոտ,
բայց երգը, որ իր ալուցքեն կը թռչի,
անտես ու ստվերոտ սանդուխներու վրա

կ’իյնա շնչահեղձ:
Շողա՛, շողա՛, բարի՛ արև, հիվա՛նդ եմ…
Ճառագայթող գոլիդ մեջ հեշտագրգիռ,
մինչ կը խժա տարօրինակ, խոլ պարը զամբուռներուն՝
հուրքե՛դ գինովցած՝
ու, մինչ թուփ ու ծաղիկ ծարավեն կը մարմրին,
ես կ’ըմբոշխնեմ խտղտանքն անանուն՝ երջանիկ տիվանդորրիս
համրորեն ու գիտակից
գինովությամբ հեշտագին:
Քի՛չ մըն ալ դեռ,
ա՛հ, շողա՛, շողա՛, բարի՛ արև, հիվա՛նդ եմ…
Վերջին անգա՛մ մըն ալ,
դեռ իրիկո՛ւն չեղած,
ու, դեռ տամուկ գիշերին վրհուկը զիս չընդգրկած,
վերջին անգա՛մ մըն ալ
փարե հոգվույս խանդաբորբ ու կաթոգի՛ն,
հիվա՛նդ եմ, բարի՛ արև, շողա՛, շողա՛…: